12. **Հենապատերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 162,243.0 հազար դրամ՝ նախատեսված 169,600.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.7%, որը պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 98,665.9 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են թվով 7 վարչական շրջաններում գտնվող խիստ վթարային հենապատերը (Ավանում՝ 3, Արաբկիրում՝ 3, Դավթաշենում՝ 1, Էրեբունիում՝ 2, Կենտրոնում՝ 2, Մալաթիա-Սեբաստիայում՝ 1, Նոր Նորքում՝ 5):

13. **Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 324,703.8 հազար դրամ՝ նախատեսված 325,403.0 հազար դրամի դիմաց, որից 19,131.0 հազար դրամով մասնակի վերանորոգվել է Գ.ր. Լուսավորիչ-Մաշտոցի պողոտա հատվածում ստորգետնյա անցումը, իսկ 305,572.8 հազար դրամի շրջանակներում Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 404-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրով՝ համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում, կառուցվել է թվով 4 վերգետնյա անցում՝ Բագրատունյաց և Դավիթ Բեկ փողոցներում, Տիգրան Մեծի պողոտայում և Ծիծեռնակաբերդի խճուղում:

14. **Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 95,908.9 հազար դրամ՝ նախատեսված 103,000.0 հազար դրամի դիմաց, որից 89,910.0 հազար դրամի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 4 կամրջների, 3 էստակադաների, 2 հետիոտն վերգետնյա անցումների, 15 ուղեանցների և ուղետարերի պահպանումը, իսկ 5,998.9 հազար դրամով վերանորոգվել է «Փեթակ» առևտրի կենտրոնի հարակից կամրջը:

15. **Հրազդանի կիրճի քարեկարգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,991.6 հազար դրամ՝ նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման աշխատանքներ:

16. **Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,365,654.6 հազար դրամ՝ նախատեսված 9,534,693.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.2%, որից 8,953,870.6 հազար դրամի շրջանակներում իրականացվել է թվով 30 փողոցների հիմնանորոգում (991 հազար 204 մետր երթևեկելի մաս, 68,083 մետր մայթեր, 37,520 մետր նոր եզրաքարերի վերանորոգում): Այս ծախսերն իրենց մեջ ներառում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 996-Ն որոշմամբ պետական բյուջեից հասկացված 7,485,024.6 հազար դրամ գումարը: 390,796.1 հազար դրամի շրջանակներում ֆինանսավորվել են Ուլնեցի և Ռուբինյանց փողոցները միացնող ավտոճանապարհի հիմնանորոգման II փուլի աշխատանքները, իսկ 20,988.0 հազար դրամի շրջանակներում Նորք-Մարաշ վարչական շրջանում ձեռք են բերվել և տեղադրվել թվով 22 հասարակական տրանսպորտի կանգառասարահներ:

17. **Փողոցների պահպանում և շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 72,311.5 հազար դրամ՝ նախատեսված 74,030.0 հազար դրամի դիմաց, որից 58,476.4 հազար դրամով իրականացվել են Երևան քաղաքի փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման աշխատանքներ, իսկ 13,844.1 հազար դրամով իրականացվել են Արշակունյաց պողոտայում և Բագրատունյաց փողոցում տեղակայված



էլեկտրատրանսպորտի ենթակայանի քայքայված և վթարային մալուխների փոխարինման աշխատանքները:

**18. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրով (պատվիրակված լիազորություններ)**

փաստացի ծախսը կազմել է 1,092,160.6 հազար դրամ՝ նախատեսված 1,606,061.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 68.0%: Նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է վարկատու Ասիական բանկի ընթացակարգերով և դրանցից որոշ գործընթացների 2014 թվական տեղափոխմամբ: Իսկ փաստացի ֆինանսավորված գումարների շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի կենտրոնը շրջանցող ճանապարհի Արշակունյաց փողոց - Շիրակի փողոց - Արտաշատի խճուղի հատվածի նախագծային և իրացման որոշ աշխատանքներ, ինչպես նաև վճարվել է Արշակունյաց և Շիրակի փողոց հատվածի կառուցման աշխատանքների կանխավճարը:

**19. Թեքահարթակների կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,837.7 հազար դրամ՝ նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.2%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայթերի մուտքերում կառուցվել են թվով 196 թեքահարթակներ:

**20. Ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագրի** փաստացի ծախսը կազմել է 564,800.4 հազար դրամ՝ նախատեսված 6,969,300.0 հազար դրամի դիմաց, որը ներառում է Ուլնեցի-Ռուբինյանց փողոցներ միջև և Ծովակալ Իսակովի պողոտա-Լենինգրադյան փողոցի միջև երկու ավտոճանապարհների կառուցումը: Ուլնեցի-Ռուբինյանց փողոցներ միջև ավտոճանապարհի կառուցումը ամբողջությամբ ավարտվել է 2013 թվականին, իսկ Ծովակալ Իսակովի պողոտա-Լենինգրադյան փողոցի միջև ավտոճանապարհի կառուցումը եղանակային պայմաններից ելնելով 2013 թվականին ամբողջությամբ չի ավարտվել և այն կավարտվի 2014 թվականին: Գործընթացն իրականացվում է համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում համապատասխան որոշումների հիման վրա կարգավորված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով:

**21. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 219,596.2 հազար դրամ՝ նախատեսված 305,459.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 71.9%, ինչի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել թվով 1320 նստարան, 520 աղբաման, 200 հայտարարությունների երկկողմանի վահանակ և 1288 դրոշակահենք:

**22. Վերելակների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83,516.9 հազար դրամ՝ նախատեսված 87,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 95.5%, որը ավել է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 10,263.8 հազար

դրամով, որի շրջանակներում թվով 6 վարչական շրջաններում նորոգվել են թվով 267 վերելակ:

23. **Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,462,289.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

24. **Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 408,427.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

25. **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)** փաստացի ծախսը կազմել է 2,793,921.1 հազար դրամ՝ նախատեսված 2,769,182.0 հազար դրամի դիմաց, որով ավարտին է հասցվել մետրոպոլիտենի արդիականացման առաջին փուլը: 2013 թվականին շարունակվել են ջրահեռացման համակարգի և գծային տնեսության արդիականացման աշխատանքները, տեղադրվել են թվով 76 պոմպեր, մոդեռնացվել է թվով 8 ուղևորատար վագոն:

26. **Դրոշների տեղադրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83,521.3 հազար դրամ՝ նախատեսված 84,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.4%, որի շրջանակներում ձեռք են բերվել և 15 օրյա պարբերականությամբ փոխվել թվով 16,200 դրոշ (միավորի միջին գինը առանց տեղադրման 2,775 դրամ) Երևան քաղաքի տարբեր վայրերում, մասնավորապես Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 159 դպրոցներում և 159 մանկապարտեզներում, 61 մշակութային օջախներում, 24 սպորտ-դպրոցներում: Քամիների, անձրևների և այլ չնախատեսված պատճառներով 2013 թվականի ընթացքում փոխվել է նախատեսվածից ավելի 816 դրոշ: Օտարերկյա նախագահների այցերի հետ կապված դրոշակազարդարման համար օգտագործվել է թվով 2601 հատ դրոշ: Միաժամանակ պատրաստվել և Երևան քաղաքի տարբեր վայրերում տեղադրվել է (փոխարինվել է) թվով 1,791 դրոշակահենք:

27. **Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 22,920.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը, ուղղվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող

մետաղական ցուցանակների ձեռք բերմանն ու տեղադրմանը, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանությանը:

28. **Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 100,000,0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

29. **Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին** փաստացի ծախսը կազմել է 395,277.7 հազար դրամ՝ նախատեսված 396,180.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել թվով 72 կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների, այդ թվում՝ համայնքային ենթակայության (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, հասարակական կազմակերպություն և այլն):

30. **Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 8,364,704.8 հազար դրամ՝ նախատեսված 8,265,437.5 հազար դրամի դիմաց, իսկ ներդրումային ծրագրի մասով փաստացի ծախսը կազմել է 564,800.4 հազար դրամ՝ նախատեսված 6,924,300.0 հազար դրամի դիմաց, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին ամբողջությամբ ավարտվել են միայն Ուլենցի-Ռուբինյանց փողոցների միջև ավտոճանապարհի կառուցման աշխատանքները, իսկ Ծովակալ Իսակովի պողոտա-Լենինգրադյան փողոցի միջև ավտոճանապարհի կառուցման աշխատանքների ավարտը եղանակային պայմաններից ելնելով տեղափոխվել է 2014 թվական:

31. **Տոնական ձևավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 46,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ տոնական օրերին Երևան քաղաքը՝ ներառյալ բոլոր վարչական շրջանները պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական դեկորատիվ առարկաներ, լույսեր և այլ զարդարանքներ ձեռք բերելու համար:

32. **Հասցեավորման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 142,483.0 հազար դրամ՝ նախատեսված 179,640.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 79.3%, որն ամբողջությամբ ուղղվել է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերմանը, իսկ փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է կանխատեսվող ցուցանիշի և փաստացի հասցեների ստացման համար դիմումների տարբերությամբ:

33. **«Գեղեցիկ Երևան» ծրագրի** իրականացման փաստացի ծախսը կազմել է 70,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որը որպես Երևանի քաղաքապետարանի մասնակցության մասաբաժին ամբողջությամբ ուղղվել է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N 258-Ա որոշմամբ համաձայնություն տրված Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԶԾ) «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականացմանը:

34. **Պարտադիր վճարների գանձման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 162,716.8 հազար դրամ՝ նախատեսված 207,589.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.4%, որից 25,572.2 հազար դրամով իրականացվել են աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրական աշխատանքներ, 64,863.8 հազ. դրամը վճարվել է թվով 2 վարչական շրջաններում օպերատորների միջոցով աղբահանության վճարների գանձման ծառայությունների համար և 72,280.8 հազար դրամը հատկացվել է համատիրություններին մյուս վարչական շրջաններում գանձված աղբահանության վճարների դիմաց:

35. **Ներդրումային ծրագրերի իրականացման** փաստացի ծախսը կազմել է 120,089.6 հազար դրամ՝ նախատեսված 120,825.6 հազար դրամի դիմաց, որն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

36. **Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,029,224.7 հազար դրամ՝ նախատեսված 5,033,106.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մատուցվել են սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության ծառայություններ, իսկ 1,500.0 հազար դրամը տրվել է Նորք-Մարաշ վարչական շրջանում սանիտարական մաքրում իրականացնող կազմակերպությանը որպես աջակցություն ձյան մաքրման աշխատանքներին:

37. **Գետերի հունների մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 35,474.0 հազար դրամ՝ նախատեսված 38,709.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.6%, որի շրջանակներում Գետառի հունի մաքրման աշխատանքներ են իրականացվել թվով 5 վարչական շրջաններում:

38. **Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,435,905.8 հազար դրամ՝ նախատեսված 1,437,100.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որից 1,376,311.7 հազար դրամը ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների կանաչ տարածքների պահպանման աշխատանքներին, 19,594.1 հազար դրամով գարնանային և աշնանային ծառատունկի համար ձեռք են բերվել

թվով 20 հազար հատ դեկորատիվ ծառեր և դեկորատիվ թփեր: 40,000.0 հազար դրամը ուղղվել է քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերին:

39. **Ախտահանման և միջատազերծման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 49,722.8 հազար դրամ՝ նախատեսված 50,495.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.5%, որի շրջանակներում թվով 7 վարչական շրջաններում ըստ անհրաժեշտությամբ տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակարան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

40. **Հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,125.0 հազար դրամ՝ նախատեսված 2,136.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.5%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական գուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

41. **Սիգամարգերի ստեղծում և ծաղկապատում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 374,358.4 հազար դրամ՝ նախատեսված 386,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.8%, որից 123,138.3 հազար դրամը ուղղվել է 15,940 խմ բուսահողի, 2000 խմ կարմիր ավազի, 66 տոննա մարմարի խիճի, 333 լիտր թունաքիմիկատի ձեռք բերմանը և սիգամարգերի գեղարվեստական ձևավորմանը: 192,000.0 հազար դրամը ուղղվել է թվով 1,000,000 ծաղկասածիլների, 5,000 գնդաձև ակացիանների, 5,000 կգ խոտի սերմի, 1,500 ոսկեգույն կիպարիսի տնկիների և թվով 500,000 կակաչների ձեռք բերմանը: 59,220.1 հազար դրամը ուղղվել է Մյասնիկյանի պողոտայի կից տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կատարմանը, Դավիթ Բեկ փողոցի (Հայրողաց տան թև), Հալաբյան փողոցի ձախ լանջի և Իսակով պողոտայի կամրջի շրջակայքի սիգամարգերի ստեղծման և ծաղկապատման աշխատանքներին:

42. **Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 219,789.7 հազար դրամ՝ նախատեսված 220,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում ստերիլիզացվել է 8,684 թափառող կենդանի (միավորի գինը էգերի համար 11,500 դրամ, արուներիինը՝ 8,800 դրամ), քնեցվել է 270-ը (միավորի գինը 3,900 դրամ), և վնասազերծվել 37,142 կենդանի (միավորի գինը 3,500 դրամ):

43. **Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 20,937.8 հազար դրամ՝ նախատեսված 25,100.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 83.4%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

44. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռք բերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,133,944.5 հազար դրամ՝ նախատեսված 1,441,869.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.6%, որն ուղղվել է Մարգարյան 37 հասցեում կառուցված նոր շենքից թվով 104 բնակարանների ձեռք բերմանը:

45. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար շենքերի կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 141,992.6 հազար դրամ՝ նախատեսված 145,965.3 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.3%, որն ուղղվել է դեռևս 2011 թվականից սկսված և 2013 թվականին շահագործման հանձնված Սիսակյան 22 շենքի կառուցման աշխատանքներին:

46. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 661,097.9 հազար դրամ՝ նախատեսված 659,624.6 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է Արիացիա մաքրման կայանի բարելավման նախագծանախահաշվային փաթեթի և մրցութային փաթեթի պատրաստմանը, Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստմանը և մրցութային փաթեթի պատրաստմանն ու մրցույթի անցկացմանը, հեռակառավարման համակարգի նախագծմանը: Գումարն իր մեջ ներառում է նաև ծրագրի իրականացման գրասենյակի պահպանման ծախսերը:

47. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 369,994.6 հազար դրամ՝ նախատեսված 400,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.5%, որի շրջանակներում Երևան քաղաքի թվով 332 փողոցներում, բակերում, խաղահրապարակներում և մինի ֆուտբոլի դաշտերում կառուցվել է 77 կմ երկարությամբ արտաքին լուսավորության ցանց, լուսատուների քանակը ավելացել է 2,413-ով, իսկ հենասյունների քանակը՝ 1,453-ով:

48. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,833,981.8 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երբադլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին (աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ):

49. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,316.5 հազար դրամ՝ նախատեսված 5,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր

կատարողականը կազմել է 96.7%, որն ամբողջությամբ ուղղվել է Շենգավիթ վարչական շրջանում Բագրատունյաց փողոցի և Գ. Նժդեհի հրապարակի շենքերի նեոնային լուսավորության վերականգնմանը:

50. **Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,928.0 հազար դրամ՝ նախատեսված 8,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 86.6%, որն ուղղվել է վթարային շենքերի սեյսմիկ հետազոտման և ինքնակամ կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին:

51. **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 276,165.0 հազար դրամ՝ նախատեսված 308,025.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 89.7%, որի սահմաններում մայրաքաղաքի թվով 10 վարչական շրջաններում մասնակի կամ ամբողջական վերանորոգվել են 295 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներ, ինչպես նաև թեք տանիքների ընթացիկ վերանորոգումների նպատակով համատիրություններին է տրամադրվել իզոգամ, ազբոշիֆեր և այլ նպատակային նյութեր:

52. **Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 1,278,862.1 հազար դրամ՝ նախատեսված 1,407,454.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.9%, որից 43,819.6 հազար դրամն ուղղվել է բակային տարածքների ընթացիկ նորոգմանը, 62,071.4 հազար դրամի շրջանակներում ձեռք են բերվել բակային տարածքների կահավորման անհրաժեշտ պարագաներ, որոնք տրամադրվել են համատիրություններին՝ դրանք բակային տարածքներում տեղադրելու համար, ինչպես նաև 1,064,388.2 հազար դրամը ուղղվել է բակերի կառուցմանը և հիմնանորոգմանը, կառուցվել են 18 մինի ֆուտբոլի դաշտեր, իսկ 83,582.9 հազար դրամով բակային տարածքներում տեղադրվել են թվով 1,000 նստարան և գրուցարան: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել շուրջ 400 բակերում:

53. **Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 390,159.3 հազար դրամ՝ նախատեսված 483,300.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80.7%, որից 278,691.5 հազար դրամով վերանորոգվել է թվով 452 բազմաբնակարան շենքի մուտք, որոնց աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով կիրառվել են տարբեր մոտեցումներ՝ աշխատանքների իրականացման ուղղակի պատվերի կամ անհրաժեշտ նյութերով համատիրություններին ապահովելու եղանակով: 4,025.7 հազար դրամով Ավան վարչական շրջանում «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակում՝ 10% համաֆինանսավորմամբ, իրականացվել է մեկ շենքի էներգետիկ

խնայողությանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև 107,442.1 հազար դրամի սահմաններում մաքրվել և նորոգվել է թվով 32 շենքերի ֆասադներ:

54. **Ջրային կառույցների շահագործում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 320,000.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 20,000.0 հազար դրամով, որն ուղղվել է թվով 28 ջրային կառույցների պահպանմանը:

55. **Կաթսայատների պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,004.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 1,996.0 հազար դրամով պակաս, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

56. **Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 109,721.6 հազար դրամ՝ նախատեսված 110,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որի շրջանակներում նորոգվել է թվով 32 կամարանցում՝ 4,807.2 քառակուսի մետր (միավորի միջին գինը 1,069.2 հազար դրամ) և գունազարդվել է թվով 36 կամարանցում՝ 2,339 քառակուսի մետր (միավորի միջին գինը 576.3 հազար դրամ), ինչպես նաև իրականացվել են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան 165, Բաբաջանյան 167, Իսակովի 46 շենքերի, Աջափնյակ վարչական շրջանի 16 թաղամասի 14-21 շենքերի և Ավան վարչական շրջանի Աճառյան 44 շենքի ֆասադների դեկորատիվ գունազարդման աշխատանքներ:

57. **Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 25,810.8 հազար դրամ՝ նախատեսված 26,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.3%, որի սահմաններում հիմնանորոգվել են թվով 35 շենքի 75 վթարային պատշգամբ (1 միավորի միջին արժեքը 344,1 հազար դրամ):

58. **Նորաշեն 16-րդ թաղամասի բազմաբնակարան շենքերի գազֆիկացման աշխատանքներին աջակցություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 244,198.1 հազար դրամ՝ նախատեսված 247,575.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.6%, որի շրջանակներում գազաֆիկացման նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել թվով 24 բազմաբնակարան շենքերում ծխատարների անցկացման ուղղությամբ, նախատեսված շենքերից 5-ում աշխատանքներ չեն իրականացվել բնակիչների բացակայության և այլ տեխնիկական պատճառներով:

59. **Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 53,862.2 հազար դրամ՝ նախատեսված 70,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.0%: Փաստացի ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի սահմաններում ձեռք է բերվել և տրամադրվել



Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին թվով 17 էլեկտրասրտագիր, 10 ուլտրաձայնային հետազոտման սարք, որից 3-ը՝ կարդիոտվիչով, 2 աուդիոնտոր և 15 բիոքիմիական անալիզատոր:

60. **Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 42,483.5 հազար դրամ՝ նախատեսված 45,900.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92.6%, որի սահմաններում Արաբկիր մանկական պոլիկլինիկայում և թիվ 9 մանկական պոլիկլինիկայում իրականացվել են վերանորոգման և ջեռուցման անցկացման աշխատանքներ:

61. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 88,021.8 հազար դրամ՝ նախատեսված 89,399.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.5%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2013 թվականին իրականացվել է թվով 130 սպորտային միջոցառում, այդ թվում՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է թվով 44 սպորտային միջոցառում, Աջափնյակ վարչական շրջանում՝ 7, Ավան վարչական շրջանում՝ 7, Արաբկիր վարչական շրջանում՝ 12, Դավթաշեն վարչական շրջանում՝ 9, Էրեբունի վարչական շրջանում՝ 8, Կենտրոն վարչական շրջանում՝ 12, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 7, Նոր Նորք վարչական շրջանում՝ 5, Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ 8, Նուբարաշեն վարչական շրջանում՝ 5, Շենգավիթ վարչական շրջանում՝ 6, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 5:

62. **Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 368,262.6 հազար դրամ՝ նախատեսված 390,157.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94.5%, որի սահմաններում 9,934.3 հազար դրամով նորոգվել է Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող այգին, 40,000.0 հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 299,395.8 հազար դրամի սահմաններում ստեղծվել և բարեկարգվել է թվով 3 հանգստի գոտի՝ Ազատամարտիկների 5-րդ նրբանցք և Նոր Արեշ 22-րդ փողոցի հատման մասում, Շիրակի փողոցի համար 12 և 14 շենքերի միացյալ բակում, ինչպես նաև Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ զանգվածի Տիգրան Մեծի անվան այգին:

63. **Հեծանվահրապարակի շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 54,394.9 հազար դրամ՝ նախատեսված 75,196.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.3%, որից 47,148.1 հազար դրամը ուղղվել է զուտ պահպանման ծախսերին, իսկ 7,246.8 հազար դրամով ձեռք բերվել թվով 60 լեռնային, խճուղային և հեծանվահրապարակի հեծանիվ:

64. **Գրադարանային ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 313,762.2 հազար դրամ՝ նախատեսված 314,613.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%, որն ուղղվել է Երևանի համայնքային 19 գրադարանային

կազմակերպությունների սուբսիդավորմանը: Փաստացի ծախսում ներառվել է նաև «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի և բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխության ազդեցությունը:

65. **Գրադարանների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 36,077.8 հազար դրամ՝ նախատեսված 50,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.2%, որով իրականացվել են թվով 16 գրադարանների ջեռուցման համակարգերի անցկացման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջությամբ ավարտվել է Երևանի ենթակայության գրադարանները ջեռուցման համակարգերով ապահովելու ծրագիրը:

66. **Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով** փաստացի ծախսը կազմել է 199,922.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար:

67. **Թանգարանների նորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 41,016.7 հազար դրամ՝ նախատեսված 50,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.0%, որի շրջանակներում ջեռուցվել են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՊՈԱԿ-ը և «Կարեն Դեմիրճյանի թանգարան» ՀՈԱԿ-ը, ինչպես նաև վերանորոգվել է «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի ցուցասրահի տանիքը:

68. **Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 74,804.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ թվով 5 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

69. **Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 119,652.3 հազար դրամ՝ նախատեսված 203,398.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.8%, որից 100,652.3 հազար դրամով հիմնանորոգվել են «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ն և «Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ը, իսկ 19,000.0 հազար դրամը ուղղվել է «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի համար անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը:

70. **Մշակութային միջոցառումների իրականացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 760,055.2 հազար դրամ՝ նախատեսված 765,374.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.3%, ինչը ներառում է Երանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների՝ առանձին-առանձին կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են ամանորի միջոցառումը, Էրեբունի-Երևան տոնակատարությունը, մարտի 8-ի և ապրիլի 7-ի միջոցառումները, Անկախության օրվան նվիրված միջոցառումները և այլն: Երևան քաղաքում 2013 թվականին իրականացվել է թվով 219 մշակութային միջոցառում, այդ թվում՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է

թվով 14 մշակութային միջոցառում, Աջափնյակ վարչական շրջանում՝ 23, Ավան վարչական շրջանում՝ 21, Արաբկիր վարչական շրջանում՝ 15, Դավթաշեն վարչական շրջանում՝ 16, Էրեբունի վարչական շրջանում՝ 12, Կենտրոն վարչական շրջանում՝ 40, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 5, Նոր Նորք վարչական շրջանում՝ 16, Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ 14, Նուբարաշեն վարչական շրջանում՝ 6, Շենգավիթ վարչական շրջանում՝ 14, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 20:

71. **Կենդանաբանական այգու ցուցադրություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 197,163.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

72. **Կենդանաբանական այգու հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 89,211.7 հազար դրամ՝ նախատեսված 89,393.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8%, որի շրջանակներում ամբողջությամբ հիմնանորոգվել է խոշոր կատվազգիների ազատավանդակը:

73. **Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 84,554.4 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ որն ուղղվել է թվով 5 կազմակերպությունների պահպանմանը:

74. **Թատերական ներկայացումներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 245,534.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով՝ և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

75. **Հուշարձանների վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,815.0 հազար դրամ՝ նախատեսված 30,700.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64,5%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

76. **Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 35,760.0 հազար դրամ՝ նախատեսված 36,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99,3%, որի շրջանակներում գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրվել են հեռուստաընկերություններ, որոնք հաշվետու տարվա ընթացքում լուսաբանել են Երևանի քաղաքապետարանի աշխատանքները:

77. **Անդամակցության վճարներ ծրագրով** փաստացի ծախսը կազմել է 22,449.0 հազար դրամ՝ նախատեսված 23,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 94,3%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի

միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները:

78. **Նախադպրոցական ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,187,607.3 հազար դրամ՝ նախատեսված 6,220,659.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99,5%, որի շրջանակներում փաստացի հաճախող երեխաթվի սկզբունքով ֆինանսավորվել է 161 մանկապարտեզ: 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը հաշվարկվել է 18.0 հազար դրամի չափով, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզի պահպանման ծախսերի համար ամսական հատկացվել է 550,0 հազար դրամ: 216,102.3 հազար դրամի սահմաններում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի միջոցներից փոխհատուցվել է «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի և բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխության ազդեցությունը:

79. **Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 359,964.4 հազար դրամ՝ նախատեսված 505,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 71,3%, որի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է թվով 2,313 մանկական կլոր սեղան, թվով 1,253 մանկական զգեստապահարան, թվով 9,438 մանկական աթոռ, թվով 1,859 մանկական եռահարկ մահճակալ, թվով 94 սալօջախ, թվով 76 սառնարան, թվով 88 սառցախցիկ, թվով 101 մսադաց, թվով 1,423 կաթսա, թվով 274 ճաշի գդալի կոպլեկտ և թվով 471 թեյնիկ:

80. **Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ցերեռական կրթություն և երեկոյան ուսուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 11,795,265.1 հազար դրամ՝ նախատեսված 11,795,340.1 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 159 դպրոցները:

81. **Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,769,361.4 հազար դրամ՝ նախատեսված 1,780,702.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99,4%, որից՝ որպես ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 41,782.3 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 1,727,579.1 հազար դրամը ուղղվել է թվով 61 երաժշտական, արվեստի դպրոցների, մանկապատանեկան մարզադպրոցների և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնների ֆինանսավորմանը:

82. Արտադարձական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 21,979.6 հազար դրամ՝ նախատեսված 54,082.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 40,6%, որից 3,050.5 հազար դրամի շրջանակներում մասնակի վերանորոգվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի «Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը, իսկ 18 929.1 հազար դրամով ջեռուցվել է «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը, «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիհարմոնիա» ՀՈԱԿ-ը և «Ա. Գաբրիելյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը:

83. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադարձական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 6,508.1 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձևահատկությունները:

84. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 77,278.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 24 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների դասարաններում սովորող թվով 616 աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

85. Նախադարձական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 536,183.8 հազար դրամ՝ նախատեսված 580,079.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 92,4%, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 29 մանկապարտեզներում:

86. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,106.1 հազար դրամ՝ նախատեսված 9,700.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93,9%, որի շրջանակներում իրականացվել է 21-րդ մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբելյանական միջոցառումներ:

87. Հանրակրթական ուսումնական հաստատություններում, աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի գծով 2013 թվականին առաջացնող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորում (պատվիրակված լիազորություններ) և Կրթական ծրագրերի գծով պարտքեր չառաջացնելու նպատակով հանրակրթական դպրոցներին օժանդակություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 344,752.3 հազար դրամ՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1336-Ն, 2013 թվականի հունիսի 27-ի N 661-Ն և 2013 թվականի հուլիսի 18-ի N 781-Ն որոշումների համաձայն:

88. **Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել 3,948.0 հազար դրամ՝ նախատեսված 4,002.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98,7%, որի հիմնականում ներառում է թվով 480 երեխաների՝ հանգստի գոտի տեղափոխման և ճանապարհի սննդի ապահովման ծախսերը:

89. **Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել 22,714.8 հազար դրամ՝ նախատեսված 27,400.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82,9%:

90. **Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն** ծրագրերով փաստացի ծախսը կազմել 592,972.4 հազար դրամ՝ նախատեսված 601,913.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98,5%, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2013 թվականի ընթացքում համայնքին դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, ինչպես նաև կազմակերպել են բարեգործական ճաշարաններ, մատուցվել են բաղնիքի ծառայություններ, տոնական և հիշատակի օրերին աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

91. **Հասարակական կազմակերպություններին աջակցություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել 27,789.8 հազար դրամ՝ նախատեսված 34,400.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 80,8%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 22 հասարակական կազմակերպությունների :

92. **Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 205,081.6 հազար դրամ՝ նախատեսված 209,099.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 98.1%, բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 142-Ն որոշմամբ սահմանված կարգով :

93. **Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 1,059,815.5 հազար դրամ՝ նախատեսված 1,070,456.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.0%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի թվով 9,391 աշխատողներ ապահովվել են սոցիալական փաթեթով:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդից հատկացվել են հետևյալ գումարները.

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 558-Ն որոշմամբ վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացվել է 2,700,000.0 հազար դրամ, որից.

- 700,000.0 հազար դրամը ավտոկայանատեղի կազմակերպման ծառայության համար, որը Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 9-ի հ. 52-Ն որոշմամբ նվազեցվել է 455,000.0 հազար դրամով և կազմել է 245,000.0 հազար դրամ, որից էլ վճարվել է 150,289.5 հազար դրամ,
- 600,000.0 հազար դրամը Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար, որը Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 91-Ն որոշմամբ նվազեցվել է 469,770.8 հազար դրամով և կազմել է 130,229.2 հազար դրամ, որից էլ վճարվել է 20,675.9 հազար դրամ,
- 1,400,000.0 հազար դրամ՝ ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման համար, որից էլ վճարվել է 1,310,084.5 հազար դրամ:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 9-ի հ. 52-Ն որոշմամբ վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացվել է 20,880.0 հազար դրամ Երևան քաղաքի Արշակունյաց 28 հասցեում գտնվող «Ռիմ Գարուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության օբյեկտի քանդման և սեփականության իրավունքի դադարեցման դիմաց փոխհատուցում տրամադրելու համար, որն էլ ամբողջությամբ վճարվել է:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեն կատարվել է 1,506,262.9 հազար դրամ հավելուրդով նախատեսված 537,155.4 հազար դրամ պակասուրդի դիմաց:

Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ ժամանակացույցի համաձայն, 2014 թվականի հունվարի 31-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի քննարկմանը, որը 2014 թվականի փետրվարի 5-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը այն հանրային քննարկման ներկայացնելու համար: 2014 թվականի փետրվարի 5-ից մինչև

փետրվարի 20-ը Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը մամուլով և Երևան քաղաքի պաշտոնական էլեկտրոնային կայքով ներկայացվել է հանրային քննարկման, իսկ 2014 թվականի փետրվարի 20-ին Երևանի քաղաքապետարանում տեղի են ունեցել բաց լսումներ: Հանրային քննարկման և բաց լսումների ընթացքում Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մասով առաջարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել: 2014 թվական փետրվարի 21-ին հանրային քննարկման արդյունքներն ամփոփվել են Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի նիստում: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԱՊԵՏ**

**Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**



Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության և դիտողության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Հանրային բաց լուսմներին մասնակցելու համար դիմած անձինք	Առաջարկության և դիտողության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4	5
Առաջարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ <b>Հ. Կիրակոսյան</b>	-	-	-

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<p>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկում</p>	<p>Նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների հրավերը հրապարակվել է  ա. <b>05.02.2014թ.</b> Երևանի պաշտոնական համացանցային <a href="http://www.yerevan.am">www.yerevan.am</a> կայքում,  բ. <b>06.02.2014թ.</b> «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում,  գ. ինչպես նաև փակցվել է Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:</p>
<p>Հանրային քննարկումների մասնակիցները</p>	<p>Հանրային բաց լսումների եղանակով <b>20.02.2014թ. ժ. 15:00</b>-ին կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Հ. Կիրակոսյանը՝ <b>13.02.2014թ. հ.Կ311</b> մասնակցության հայտի համաձայն:  Հանրային քննարկումների հրավերով սահմանված կարգով և ժամկետում այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք չեն մասնակցել հանրային քննարկումներին:</p>
<p>Հանրային քննարկումների մասնակցության արդյունքները</p>	<p>Հանրային քննարկումների հրավերով սահմանված կարգով և ժամկետում նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել:</p>
<p>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք կան)</p>	<p>Հանրային բաց լսումների ընթացքում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Հ. Կիրակոսյանի կողմից ներկայացվել է  ա. Երևան քաղաքի <b>2014թ.</b> բյուջեով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի համապատասխան համաֆինանսավորման հնարավորության քննարկման վերաբերյալ առաջարկություն,  բ. Երևան քաղաքի <b>2015թ.</b> բյուջեում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի համապատասխան ֆինանսավորումը նախատեսելու վերաբերյալ առաջարկություն:</p>